Կիլիմանջարոյի ձյունները

հեղինակ՝ Էռնեստ Հեմինգուեյ
թարգմանիչ՝ Պերճ Զեյթունցյան
աղբյուր՝ «Կիլիմանջարոյի ձյունները»

Կիլիմանջարոն ձյունածածկ լեռ է, ունի 19710 ոտնաչափ բարձրություն: Ասում են, որ Աֆրիկայի ամենաբարձր կետն է: Մասաի ցեղի մարդիկ նրա արեւմտյան գագաթն անվանում են «Նգայե-նգայի», որ նշանակում է Աստծո տուն: Արեւմտյան գագաթի մոտ ընկած է ընձառյուծի չորացած ու սառած մի դիակ: Մինչեւ հիմա ոչ ոք չի կարողացել բացատրել, թե ընձառյուծն ինչ գործ ուներ այսպիսի բարձրության վրա:

— Զարմանալի է, որ այլեւս չի ցավում,— ասաց նա:— Եվ հենց դրանից էլ հասկանում են, թե երբ է սկսվում:

— Իսկապե՞ս չի ցավում:

— Բոլորովին: Միայն ներիր, որ հոտ է գալիս: Երեւի տհաճ է քեզ համար:

— Ինչո՞ւ ես այդպես խոսում: Խնդրում եմ, պետք չի:

— Այն կողմ նայիր,— ասաց նա,— ի՞նչն է սրանց այստեղ բերել, տեսարա՞նը, թե՞ հոտը:

Մահճակալը, որի վրա պառկել էր նա, դրված էր միմոզայի ստվերում, ու նայելով ստվերից այն կողմ, արեւի կուրացուցիչ փայլով ողողված հարթությանը, նա տեսնում էր անճոռնի տեսքով գետնին պպզած երեք հսկա թռչուն: Իսկ տասնյակից ավելի թռչուններ ճախրում էին օդում եւ նրանց ստվերները սահում էին գետնի վրայով:

— Այն օրվանից, ինչ մեր բեռնատարը խափանվեց, նրանք միշտ այստեղ են,— ասաց նա:— Այսօր առաջին անգամն է, որ նստեցին գետնին: Առաջ ես ուշադիր հետեւում էի նրանց, մտածելով, որ գուցե կօգտագործեմ որեւէ պատմվածքում: Իսկ հիմա ծիծաղելի է այդ մասին մտածել:

— Այդպես մի՛ խոսիր,— ասաց կինը:

— Դե, ես հենց այնպես եմ խոսում,— ասաց տղամարդը,— երբ խոսում ես, ավելի թեթեւ ես զգում: Ես բնավ չեմ ուզում քեզ տանջել:

— Դու լավ գիտես, որ չես տանջում: Ես զայրանում եմ նրա համար, որ ոչնչով չեմ կարող քեզ օգնել: Ինձ թվում է, որ մինչեւ ինքնաթիռի գալը պետք է սեղմել ատամներն ու դիմանալ:

— Եվ կամ չսպասել:

— Խնդրում եմ, ասա, ի՞նչ կարող եմ անել: Մի՞թե ոչնչով չեմ կարող օգնել:

— Կարող ես կտրել ոտքս, որպեսզի հիվանդությունը չտարածվի: Չնայած դրանում էլ չեմ կասկածում: Կամ կարող ես կրակել ինձ վրա: Դու հիմա լավ ես կրակում: Ես քեզ սովորեցրել եմ կրակել, այդպես չէ՞:

— Խնդրում եմ, այդպես մի խոսիր: Ուզո՞ւմ ես, կարդամ քեզ համար:

— Ի՞նչ կարդաս:

— Որեւէ բան, որ դեռ չենք կարդացել:

— Չեմ կարող լսել,— ասաց նա:— Խոսելն ամենից լավ է: Մենք վիճում ենք ու դրանով մի կերպ սպանում ժամանակը:

— Ես չեմ վիճում: Ես երբեք չեմ ուզում վիճել: Եկ այլեւս չվիճենք: Թեկուզ ինչքան էլ դյուրագրգիռ վիճակում լինենք: Գուցե այսօր մի ուրիշ բեռնատար ուղարկեն: Գուցե ինքնաթիռը գա:

— Չեմ ուզում տեղիցս շարժվել,— ասաց տղամարդը,— հիմա էլ ի՞նչ միտք ունի շարժվել: Մի՞թե միայն քեզ թեթեւացնելու համար:

— Դա վախկոտություն է:

— Չե՞ս կարող թողնել, որ մարդ հանգիստ մեռնի, պետք է անպայման պիտակնե՞ր կպցնես: Ինչ օգուտ, որ ինձ վախկոտ ես անվանում:

— Դու չես մեռնի:

— Հիմար բաներ մի ասա: Ես մեռնում եմ: Ա՛յ, այդ գարշելիներին հարցրու:

Նա նայեց հսկա ու նողկալի թռչուններին, որոնք մերկ գլուխները թաղել էին գզգզված փետուրների մեջ: Չորրորդ թռչունը եւս գետին իջավ, արագ քայլերով վազեց մի փոքր, հետո դանդաղ օրորվելով, մոտեցավ մյուսներին:

— Նրանք շրջում են բոլոր ճամբարների մոտ: Մարդիկ սովորաբար չեն նկատում նրանց: Դու չե՛ս մեռնի, եթե չհանձնվես:

— Որտե՞ղ ես կարդացել դա: Ինչքան հիմա՛ր ես:

— Գոնե ուրիշների՛ մասին մտածիր:

— Ի սեր աստծո, ձեռք քաշիր,— ասաց նա,— ձանձրացել եմ:

Նա մի քանի րոպե լուռ պառկեց, նայելով հեռվում երեւացող թփուտներին: Նա տեսավ մի քանի վայրի ոչխար, որոնք դեղին ֆոնի վրա բոլորովին ճերմակ էին դարձել, իսկ քիչ այն կողմ նկատեց զեբրեր, որոնք նույնպես ճերմակ էին թվում կանաչ թփուտների կողքին: Ճամբարը գտնվում էր հարմար տեղում՝ բլրի դիմաց, հսկա ծառերի տակ. հիանալի ջուր կար ու գրեթե ցամաքած մի աղբյուր, որի վրա առավոտները կաքավներ էին թռչում:

— Ուզո՞ւմ ես կարդամ,— հարցրեց կինը: Նա նստել էր մահճակալի դիմաց, ծալովի աթոռակին:— Քամի է բարձրանում:

— Չեմ ուզում, շնորհակալություն:

— Գուցե բեռնատարը կգա:

— Ինձ համար միեւնույն է:

— Իսկ ինձ համար միեւնույնը չէ:

— Շատ բան, որ ինձ համար միեւնույն է, քեզ համար միեւնույնը չէ:

— Ո՛չ միշտ, Հարրի:

— Չխմե՞նք:

— Վնաս՛ է քեզ: Բլեքն ասում է, որ պետք է խուսափել ալկոհոլից: Դու չպե՛տք է խմես:

— Մոլո՛,— գոռաց նա:

— Լսում եմ, բվանա:

— Սոդայով վիսկի բեր:

— Դու չպե՛տք է խմես,— կրկնեց կինը,— ես հենց սա՛ նկատի ունեի, երբ ասում էի, որ հանձնվում ես: Բլեքը գրում է, որ դա վնասակար է: Ես գիտե՛մ, որ վնասակար է:

— Ոչ,— ասաց նա,— օգտակար է:

Ուրեմն, հիմա ամեն ինչ վերջացավ, մտածում էր նա: Ուրեմն, հիմա նա այլեւս երբեք հնարավորություն չի ունենա որեւէ բան վերջացնելու: Ուրեմն, սա՛ է վախճանը. վեճ՝ վիսկիի համար: Այն պահից, ինչ նրա ոտքը վարակվեց փտախտով, ցավը դադարեց, ցավի հետ դադարեց նաեւ սարսափը, ու հիմա նա զգում էր միայն անհաղթահարելի մի հոգնություն ու զայրանում, որ այսպիսին էր լինելու վախճանը: Այն, ինչ սպառնում էր հիմա, այլեւս չէր հետաքրքրում իրեն: Այդ բանը տարիներ շարունակ հետապնդել էր նրան, բայց հիմա այլեւս ոչ մի նշանակություն չուներ նրա համար: Տարօրինակ է, որ հատկապես հոգնությո՛ւնն էր թեթեւացնում ամեն ինչ:

Հիմա նա այլեւս երբեք չի գրի այն մասին, ինչ հոգատարությամբ պահել էր իր մտքում, պահել էր այն օրվա համար, երբ վստահ կլիներ, որ արդեն կարող է գրել այնպես, ինչպես հարկն է: Հիմա նա այլեւս անհաջողության անգամ չի մատնվի: Գուցե դու բնա՛վ էլ չէիր կարողանա գրել ու դրա համար էլ անընդհատ հետաձգում էիր ու սիրտ չէիր անում սկսել: Բայց հիմա նա չի՛ էլ իմանա, թե ո՛րն է ճշմարտությունը:

— Երանի այստեղ չգայինք,— ասաց կինը: Նա նայում էր բաժակին, որ բռնել էր տղամարդը, ու կծում էր շրթունքները:— Փարիզում այսպիսի բան չէր պատահի: Դու միշտ ասել ես, որ սիրում ես Փարիզը: Կարող էիր Փարիզում մնալ կամ որեւէ այլ տեղ գնալ: Ես կգայի քեզ հետ: Հիշո՞ւմ ես, ես ասացի, որ ուր էլ գնաս, քեզ հետ կգամ: Եթե ուզում էիր որսորդությամբ զբաղվել, կարող էինք Հունգարիա գնալ, ու ամեն հարմարություն ունենալ:

— Քո անիծյալ փողերն են մեղավոր,— ասաց նա:

— Դու իրավացի չես,— ասաց կինը,— այդ փողերը որքան իմն են եղել, նույնքան էլ եղել են քոնը: Ես ամեն ինչ թողեցի ու քեզ հետ եկա, ես ամեն ինչ արեցի, ամեն ինչ, որ դու ցանկացար: Բայց երանի այստեղ չգայինք:

— Դու ասացիր, որ հավանում ես Աֆրիկան:

— Հավանում էի, երբ դու առողջ էիր: Բայց հիմա ատում եմ: Չեմ հասկանում, ինչո՞ւ պետք է ցավեր ոտքդ: Ինչ վատ բան ենք արել, որ այսպիսի փորձանք եկավ մեր գլխին:

— Իմ կարծիքով, պատճառը նախ այն է, որ ոտքիս քերծվածքը յոդով չայրեցի: Իսկ հետո ոչ մի ուշադրություն չդարձրի, որովհետեւ կյանքումս երբեք չեմ վարակվել: Ավելի ուշ, երբ ոտքս սկսեց ցավել, քարբոլինի թույլ լուծույթով ախտահանեցի: Ախտահանող այլ դեղեր

չէին մնացել: Դրա համար էլ արյան անոթները խցանվեցին, ու սկսվեց փտախտը:— Նա նայեց կնոջը.— էլ ուրիշ ի՞նչ պատճառ կարող է լինել:

— Ես դա նկատի չունեմ:

— Եթե մենք խելքը գլխին մեքենավար վարձեինք եւ ոչ թե ինչ-որ հիմար բնիկ, նա ստուգած կլիներ, թե շարժիչում ինչքան յուղ կա ու չէր վառի առանցքակալը:

— Ես դա նկատի չունեմ:

— Եթե դու չթողնեիր քո ընկերներին, բաժանվեիր այդ անիծյալ Ուեսթբերիի, Սարաթոգայի, Փալմ-Բիչի ծանոթներից ու չմիանայիր ինձ…

— Բայց ես սիրո՛ւմ էի քեզ: Դու իրավացի չես: Ես հիմա էլ եմ քեզ սիրում: Եվ պիտի միշտ սիրեմ: Իսկ դու չե՞ս սիրում:

— Ո՛չ,— ասաց տղամարդը,— չեմ կարծում: Ես երբեք չեմ սիրել քեզ:

— Հարրի, այդ ի՞նչ ես ասում: Խելքդ թռցրե՞լ ես:

— Ոչ: Ես խելք չունեմ, որ թռցնեմ:

— Մի՛ խմիր,— ասաց կինը,— սիրելի՛ս, խնդրում եմ, մի՛ խմիր: Մենք պետք է ամեն ինչ անենք, ամե՛ն ինչ, որ կարող ենք:

— Եթե շատ ես ուզում, ինքդ արա,— ասաց նա,— իսկ ես հոգնած եմ:

Հիմա նա իր աչքերի առջեւ պատկերացրեց Քարագաչի կայարանը: Պարտությունից հետո նա մեկնում էր Թրակիայից ու հիմա ճամպրուկը ձեռքին կանգնել նայում էր, թե ինչպես Սիմիոն-Օրիենթի ճեպընթացն իր լուսարձակներով կտրում-անցնում էր մթությունը: Սա՛ էլ այն բաներից մեկն է, որ նա փրկել էր գրելու համար ու միշտ պահում էր իր մտքում: Ո՛չ միայն սա, այլ նաեւ այն առավո՛տը, երբ նախաճաշի ժամանակ նայում էին պատուհանից ու տեսնում Բուլղարիայի ձյունածածկ լեռները: Իսկ Նանսենյան միսիայի քարտուղարուհին հարցրեց մի ծերունու, թե արդյոք ձյո՞ւն էր դա: Ծերունին նայեց ու պատասխանեց. «Ոչ, ձյուն չէ: Դեռ շատ շուտ է ձյան համար»: Ու քարտուղարուհին, կրկնելով ծերունու խոսքերը, դիմեց մնացած աղջիկներին. «Լսեցի՞ք, ձյուն չէ»: Ու աղջիկները եւս միասին կրկնեցին. «Ձյուն չէ, սխալվել ենք»: Բայց դա ձյո՛ւն էր, իսկակա՛ն ձյուն, ու երբ սկսվեց ազգաբնակչության փոխանակումը, պետն այնտեղ ուղարկեց շատ ու շատ մարդկանց: Ու հենց այդ ձյունների մե՛ջ թափառեցին մարդիկ, մինչեւ որ սառեցին ու մահացան:

Ձյուն էր նաեւ Գաուերթալում, նոր տարվա այն գիշերը: Նրանք ապրում էին փայտահատի տան սենյակներից մեկում, որի կեսը գրավել էր հախճապակե քառակուսի վառարանը: Նրանք քնում էին հաճարենու տերեւներով լցված ներքնակների վրա: Մի օր նրանց տան մոտ երեւաց մի դասալիք, որը ձյան վրա ոտնահետքեր էր թողել ու արյան կաթիլներ: Ասաց, որ ոստիկանները հետապնդում են իրեն: Նրան բրդե գուլպաներ տվեցին, իսկ հետո ոստիկանների հետ խոսակցության բռնվեցին ու շեղեցին նրանց ուշադրությունը, մինչեւ որ ոտնահետքերն անհետացան:

Նոր տարվա օրը Շրունցում ձյունն այնպես էր փայլում, որ ծակում էր աչքերը ու թույլ չէր տալիս դուրս նայել գինետան պատուհանից եւ տեսնել եկեղեցուց վերադարձող մարդկանց:

Շրունցում նրանք քայլում էին ձյունոտ մի ճանապարհով, որ դեղնել էր ձիերի մեզից: Ճանապարհի կողքին մի գետ կար, իսկ քիչ այն կողմ՝ սոճու անտառներով ծածկված բլրակներ: Նրանք գնում էին ոտքով, իսկ դահուկները տանում էին ուսերի վրա: Նրանք հիանալի ժամանակ անցկացրին Մաղլեներ Հաուսի սահադաշտում: Ձյունը հարթ էր, ինչպես շաքարաշերտը, ու թեթեւ, ինչպես փոշին: Ու նա հիշեց այն խոր լռությունը, երբ ինքը թռչունի արագությամբ դահուկներով վայրէջք էր կատարում:

Բորանի պատճառով նրանք մի շաբաթ մնացին Մաղլեներ Հաուսում: Ծխացող լապտերի տակ թուղթ էին խաղում, ու ինչքան պարտվում էր Հերդ Լենցը, այնքան էլ բարձրանում էր խաղագումարը: Ի վերջո նա ամեն ինչ կորցրեց: Ամեն ինչ՝ սպորտ դպրոցի դրամը, ամբողջ սեզոնի շահույթը, իսկ հետո նաեւ ամբողջ ունեցվածքը: Նա կենդանի պատկերացրեց մեծ քթով այդ մարդուն: Պատկերացրեց այն պահը, երբ նա սեղանից վերցնում էր խաղաթղթերը եւ հետո բաց անում Sans voir[1]: Այն ժամանակ նրանք անընդհատ խաղում էին, խաղում էին օր ու գիշեր: Ձյուն չէր գալիս՝ խաղո՛ւմ էին: Բուք ու բորան էր՝ միեւնո՛ւյն է, էլի՛ էին խաղում: Նա մտածեց, թե կյանքում ինչքա՞ն ժամանակ էր վատնել թղթախաղի վրա:

Բայց նա ոչ մի տող անգամ չէր գրել այդ մասին, չէր գրել նաեւ նոր տարվա այն ցուրտ եւ պայծառ օրվա մասին, երբ պարզ երեւում էին դիմացի լեռները, որո՛նց վրայով թռավ Բարկերի ռմբակոծիչը: Թռավ, որպեսզի գնդակոծեր ավստրիացի սպաներով լեցուն գնացքը: Ավստրիացիները դիրքերից տուն էին վերադառնում, ու երբ նրանք վախեցած այս ու այն կողմ ցրվեցին եւ սկսեցին փախչել, Բարկերը գնդացրով կրակ տեղաց նրանց վրա: Նա հիշեց, թե ինչպես հետո Բարկերը սպաների ճաշարանը մտավ ու սկսեց պատմել այդ մասին: Եվ ինչպես հանկարծ լռություն տիրեց ու ինչ որ մեկն ասաց.— «Անիծյա՛լ, կեղտո՛տ, մարդասպան»:

Մեռածները նույնպիսի ավստրիացիներ էին, որոնց հետ նա հետո մրցում էր իր դահուկներով: Ո՛չ, նույնպիսին չէին: Հանսը, որի հետ նա մի ամբողջ տարի սահել էր դահուկներով, ծառայել էր վարձկան զորամասում: Ու երբ փայտամշակման գործարանի մոտ գտնվող փոքրիկ հովտում նրանք միասին նապաստակ էին որսում, երկուսն էլ հիշում էին Փասուբիոյի մարտերն ու Փերթիքոյի եւ Ասպոնեի գրոհները: Ու նա այդ մասին եւս երբեք ոչ մի տող չգրեց: Ո՛չ Մոնծե Քորնոյի, ո՛չ Սիեթ Քոմունիի, ո՛չ էլ Արսիեդոյի մասին:

Քանի՞ ձմեռ ապրեց Վորալբերգում եւ Արլբերգում: Չո՛րս: ու նա հիշեց, թե ինչպես մի օր, երբ նրանք Բլուդենց էին գնում նվերներ գնելու, ճանապարհին հանդիպեցին մի մարդու, որ աղվես էր վաճառում: Հիշեց բալից պատրաստված հիանալի քիրշը, փոշու նման թեթեւ ձյան մրրիկը, «Հեյ-հո՛, ասաց Ռոլլին» երգը, որ միշտ լսվում էր ողորապտույտ վայրէջքի վերջին հատվածում: Իսկ հետո հարկավոր էր ուղիղ գնալ, երեք անգամ ցատկ կատարել ու ընկնել պարտեզ, անցնել առուն եւ դուրս գալ հյուրանոցի սառցակալած ճանապարհը: Նա ոտքերից հանում էր դահուկներն ու հենում փայտե պատին: Պատուհանից երեւում էր լամպի լույսը, իսկ այնտեղ, թարմ գինու հոտով լեցուն, ծխոտ սենյակի տաքության մեջ, ակորդեոն էին նվագում:

— Փարիզի ո՞ր մասում էինք ապրում,— հարցրեց նա կնոջը, որ նստել էր նրա կողքին, ծալովի աթոռակի վրա՝ այստե՛ղ, Աֆրիկայո՛ւմ:

— Քրիյոն հյուրանոցում: Ինքդ էլ գիտես:

— Իսկ ինչո՞ւ պետք է իմանամ:

— Մենք միշտ այնտեղ ենք ապրել:

— Ո՛չ միշտ:

— Այնտեղ եւ մեկ էլ Սեն Ժերմեն արվարձանում, Հենրիխ Չորրորդի տաղավարում: Դու ասում էիր, որ սիրում ես այդ արվարձանը:

— Սերը նման է աղբանոցի,— ասաց Հարրին,— իսկ ես նման եմ աքլորի, որ ծուղրուղու կանչելու համար բարձրացել է աղբանոցի վրա:

— Եթե դու իսկապե՛ս մեռնում ես,— ասաց կինը,— ապա մի՞թե այդքան անհրաժեշտ է մեռցնել նաեւ այն ամենը, ինչ մնում է քեզանից հետո: Մի՞թե անհրաժեշտ է, որ ամեն ինչ քեզ հետ տանես: Մի՞թե ուզում եմ սպանել ձիդ, սպանել կնոջդ եւ այրել քո թամբն ու զենքը:

— Այո՛, ուզում եմ,— ասաց նա,— քո անիծյալ փողե՛րն են եղել իմ զենքը: Իմ թա՛մբն ու զե՛նքը:

— Բավակա՛ն է:

— Լա՛վ: Այլեւս չեմ խոսի: Ես չեմ ուզում քեզ վիրավորել:

— Մի փոքր ուշ գլխի ընկար:

— Այդ դեպքում՝ ավելի՛ լավ: Կշարունակեմ վիրավորել: Դա ինձ զվարճացնում է: Միակ բանը, որ ես իսկապե՛ս սիրում էի քեզ հետ անել, հիմա արդեն անկարող եմ:

— Ոչ, ճիշտ չէ: Դու սիրում էիր նաեւ այլ բաներ եւ ամեն ինչ, որ ցանկանում էիր անել, անում էի նաեւ ես:

— Ի սեր աստծո, բավական է գլուխ գովես:

Հարրին նայեց կնոջը ու տեսավ, որ նա լաց է լինում:

— Լսիր,— ասաց նա,— ինչո՞ւ ես կարծում, որ ես հաճույք եմ ստանում այս ամենից: Ես էլ չգիտեմ, թե ինչո՞ւ եմ այսպես խոսում: Երեւի սպանո՛ւմ ես, որպեսզի զգաս, որ ինքդ դեռ կենդանի ես: Երբ սկսեցինք խոսել, ես ինձ լավ էի զգում: Ես մտադիր չէի քեզ վիրավորել: Չգիտեմ, ինչո՞ւ խելքս կորցրի ու տանջեցի քեզ: Սիրելիս, ուշադրություն մի դարձրու իմ խոսքերին: Ես սիրում եմ քեզ: Դու գիտես, որ սիրում եմ: Ոչ մեկին այնքան չեմ սիրել, որքան քեզ:

Նա նորից սկսեց սովորականի պես ստել: Ու ստե՛լն էր, որ նրան միշտ տալիս էր հանապազօրյա հացն ու ջուրը:

— Ի՛նչ լա՛վն ես:

— Քա՛ծ,— ասաց նա,— հարուստ քա՛ծ: Սա պոեզիա է: Հիմա ես լի եմ պոեզիայով: Ապականությամբ ու պոեզիայով: Ապականվա՛ծ պոեզիայով:

— Բավական է: Ի՛նչ սատանա մտավ մեջդ:

— Չեմ ուզում ոչինչ թողնել,— ասաց տղամարդը,— ինձանից հետո ոչի՛նչ չեմ ուզում թողնել:

Վրա հասավ երեկոն: Հարրին արթնացավ: Արեւն անցնում էր բլրի հետեւը, ու ամբողջ հարթությունը ծածկվել էր ստվերով: Մանր կենդանիներն արածում էին ճամբարի մոտ: Նրանք հեռացել էին թփուտներից եւ հիմա շարժում էին պոչերն ու գլուխները թաղում խոտերի մեջ: Թռչուններն այլեւս չէին հերթապահում գետնի վրա: Նրանց թիվը շատացել էր, ու բոլորն էլ թանրորեն թառել էին ծառերին:

Հարրիի երիտասարդ ծառան նստել էր մահճակալի կողքին:

— Մեմսահիբը գնաց կրակելու,— ասաց տղան, — բվանան ոչինչ չի՞ ուզում:

— Ոչ:

Նա գնացել էր ճաշի համար որս բերելու եւ իմանալով, որ Հարրին սիրում էր դիտել կենդանիներին, բավական հեռացել էր ճամբարից, որպեսզի չխանգարեր նրան: Նա ամեն ինչ հիշում է, մտածեց Հարրին: Ամեն ինչ, որ իմացել է, կարդացել կամ պարզապես լսել է ուրիշներից:

Մի՞թե կնոջ մեղքն էր, որ երբ նրանք ծանոթացան, Հարրին արդեն սպառված մարդ էր: Ինչպե՞ս կարող է կինն առհասարակ իմանալ, որ քո խոսքերն անիմաստ են, իմանալ, որ դու խոսում ես պարզապես սովորությունի՛ց մղված կամ քո սեփական հանգստությա՛ն համար: Երբ նա դադարեց ուշադրություն դարձնել իր խոսքերին, նրա սուտը կանանց մոտ ավելի՛ հաջողություն գտավ, քան երբեմնի ճշմարտությունը:

Վատն այն չէր, որ նա ստում էր, վատն այն էր, որ ճշմարտություն չկար: Նա արդեն ապրել, վերջացրել էր իր կյանքը, բայց դեռ շարունակո՛ւմ էր ապրել, ապրում էր ուրի՛շ մարդկանց շրջապատում, նա հիմա փո՛ղ էլ ուներ, նա հիմա ծանոթ վայրերից ընտրում էր ամենալա՛վը, իսկ հետո նորից ու նո՛ր վայրեր փնտրում:

Հարկավոր էր չմտածել այդ մասին, այդ դեպքում ամեն ինչ լավ կլիներ: Դու հարուստ ներքնաշխարհ ունեիր ու դրա համար էլ մանր մարդ չդարձար, ինչպես մեծամասնությունն է դառնում, դու ձեւացրիր, որ թքած ունես քո գործի վրա, որն առաջ այդքան զբաղեցնում էր քեզ, բայց որը հիմա արդեն վեր էր քո ուժերից: Սակայն դու միշտ ներքուստ համոզում էիր քեզ, որ մի օր անպայման կգրես այդ մարդկանց մասին: Ամենի՛ց հարուստ մարդկանց մասին: Համոզում էիր քեզ, որ դու չե՛ս պատկանում նրանց ոհմակին, որ դու պարզապես դիտո՛ղ ես այդ ոհմակում: Կարծում էիր, որ քեզ կհաջողվի հեռանալ այդ մարդկանցից, իսկ հետո գրել նրանց մասին: Ու առաջին անգամ կյանքում, այդ գործը գրված կլինի մի մարդու կողմից, որ լավ գիտեր այն ամենը, ինչի մասին որ գրում էր: Բայց նա երբեք գործի չանցավ, որովհետեւ ամեն մի օրն իր հետ բերեց անհոգություն, հանգստավետություն, բերեց նաեւ արհամարհանք սեփական անձի նկատմամբ, ու այս ամենը բթացրին նրա ընդունակություններն ու թուլացրին աշխատելու ձգտումը, այնպես որ, ի վերջո, նա բոլորովին դադարեց գրել: Նրա ծանոթների համար ավելի հարմար էր, երբ նա չէր գրում: Իր կյանքի լավագույն օրերը նա անցկացրել է Աֆրիկայում, ու հիմա դարձյալ վերադարձել է, որպեսզի ամեն ինչ սկզբից սկսի: Ճամփորդության ժամանակ նրանք քիչ հարմարություններ ունեին: Ճիշտ է, զրկանքներ չէին կրում, բայց ճոխություն էլ չկար, ու նա կարծում էր, որ այսպիսի պայմաններում դարձյալ կգտներ իրեն: Կարծում էր, որ այսպիսով նրան կհաջողվեր հոգու վրա հավաքված ճարպը հեռացնել, ճիշտ այնպես, ինչպես բռնցքամարտիկը, որ սար է բարձրանում, աշխատում ու վարժություններ է կատարում, որպեսզի ազատվի մարմնի ճարպից:

Ափրիկան դուր եկավ կնոջը: Նա ասաց, որ հավանեց Ափրիկան: Նա սիրում էր այն ամենն, ինչ գրգռիչ է, սիրում էր կյանքի փոփոխություն, նոր ծանոթություններ ու զվարճություն: Ու Հարրին հավատում էր, որ նորից իր մեջ ուժ կգտնի ու կանցնի աշխատանքի: Եթե սա նշանակում է, որ վերջն անխուսափելի է, իսկ նա գիտե՛ր, որ վերջն անխուսափելի է, ապա արդյոք արժե՞ր ողնաշարը ջարդած օձի նման կծել ինքն իրեն: Կինը ոչնչով մեղավոր չէր: Եթե նա չլիներ, նրա փոխարեն կլիներ մի ուրիշը: Քանի որ նա իր ամբողջ կյանքն ապրել էր ստի ու կեղծիքի մեջ, ապա թող բարի լիներ հենց ստի ու կեղծիքի մե՛ջ մեռնելու: Նա բլրի ետեւից հրացանի ձայն լսեց:

Հիանալի էր կրակում այդ բարի եւ հարուստ քածը, որն իր խնամակալն էր եւ որը կործանեց իր տաղանդը: Հիմարությո՛ւն: Նա ինքն էր կործանել իր տաղանդը: Ինչո՞ւ մեղադրել այս կնոջը, մի՞թե նրա համար, որ նրան տվել էր հարմարավետ ու հանգիստ կյանք: Նա ինքն էր կործանել իր տաղանդը, որովհետեւ չէր կարողացել օգտագործել այն, որովհետեւ դավաճանել էր ինքն իրեն ու իր հավատին, որովհետեւ կյանքն անցկացրել էր հարբեցողությամբ, ու խմիչքը բթացրել էր նրա ստեղծագործական կարողությունները, որովհետեւ ծո՛ւյլ էր եղել, եղել էր շռայլությունների ու զվարճությունների մեջ ապրող մարդ, եղել էր սնո՛բ, փառամոլ, ու սնապա՛րծ, կործանել էր իրեն աշխարհի բոլոր ստերով ու ճշմարտություններով: Ի՞նչ էր սա: Հին գրքերի ցուցա՞կ: Էլ ի՛նչ տաղանդ: Ի՛նչ խոսք, տաղանդ կա՛ր, բայց փոխանակ օգտագործելու իր տաղանդը, նա վաճառքի էր հանել այն: Նա երբեք չի ասել իրեն՝ ես այս ինչ բանն արեցի: Միշտ ասել է՝ ես կարո՛ղ էի այս ինչ բանն անել: Նա նախընտրել էր օրվա հացը շահել ոչ թե մատիտի ու գրչի, այլ ուրիշ միջոցներով: Տարօրինակ էր նաեւ այն, որ երբ նա սիրահարվում էր որեւէ կնոջ, ապա վերջինս միշտ ավելի հարուստ էր լինում, քան նախորդը: Իսկապես, տարօրինակ է, չէ՞: Բայց երբ նա դադարում էր սիրել, երբ նա սկսում էր ստել, ինչպես հիմա ստում էր այս կնոջը, որ բոլորից շատ դրամ ուներ, անհատնում հարստություն, որ մի ժամանակ ունեցել է ամուսին ու երեխաներ, որն առա՛ջ էլ ունեցել է սիրահարներ, սակայն բավարարություն չի գտել նրանց մեջ ու սիրել է միայն նրան, սիրել է եւ՛ որպես գրողի, եւ՛ որպես տղամարդու, եւ՛ որպես ընկերոջ, եւ՛ որպես թանկարժեք իրի,— տարօրինակ չէ՞ որ երբ նա դադարեց նրան սիրել ու սկսեց ստել, ապա այնուամենայնիվ նա կարողացավ շա՛տ ավելի բան տալ այդ կնոջ փողերի դիմաց, քան մինչ այդ կարողացել էր տալ այն բոլո՛ր կանանց, որոնց իսկապե՛ս սիրել է:

Մենք բոլորս էլ երեւի ստեղծված ենք նրա համար, որպեսզի ուզած-չուզած հարմարվենք մեր ճակատագրին: Տաղանդն արտահայտվում է նրանում, թե ինչպես ես վաստակում օրվա հացդ: Նա ամբողջ կյանքում այս կամ այն ձեւով վաճառել է իր տաղանդը, իսկ երբ սեր չկա, չկա զգացմունք, ապա քո ստացած փողերի դիմաց ավելի որակյալ ապրանք ես տալիս: Նա արդեն համոզվե՛լ էր դրանում, բայց հիմա այդ մասի՛ն եւս երբեք չի կարողանա գրել: Ո՛չ, չի կարողանա, մինչդեռ արժե՛ր գրել:

Նա տեսավ կնոջը, որ հրացանը ձեռքին մոտենում էր իրենց վրանին: Նա հագել էր զինվորականի անդրավարտիք: Երկու երիտասարդ ծառաները գալիս էին նրա ետեւից ու բերում սպանված ոչխարը: Այնուամենայնիվ նա հետաքրքիր կին է, մտածեց Հարրին, ու լավ մարմին ունի: Նա անչափ տաղանդավոր եւ անչափ գիտակ էր անկողնի հարցերում: Չես կարող ասել, որ գեղեցիկ էր, բայց նրա դեմքը դուր էր գալիս Հարրիին, նա հսկայական քանակությամբ գրքեր էր կարդում, սիրում էր ճամփորդել ու որսորդությամբ զբաղվել եւ հիարկե, անչափ շատ էր խմում: Ամուսինը մահացել էր, երբ նա համեմատաբար ավելի

երիտասարդ էր: Ամուսնու մահից հետո որոշ ժամանակ նա իրեն նվիրեց արդեն հասունացած իր երեխաներին, որոնք բնավ էլ նրա կարիքը չունեին ու ճնշված էին զգում իրենց: Նա տարվեց նաեւ ախոռով, գրքերով ու խմիչքով: Երեկոյան, ընթրիքից առաջ, նա սիրում էր գիրք կարդալ: Ու կարդալիս սողայով վիսկի էր խմում: Ընթրիքի էր գալիս հարբած, իսկ երբ ընթրիքի ժամանակ եւս մի բաժակ գինի էր խմում, քունն անմիջապես տանում էր: Բայց դա առաջ էր, մինչեւ սիրահարներ ունենալը: Իսկ երբ սիրահարներ ունեցավ, այլեւս այդքան շատ չէր խմում, որովհետեւ քունը տանում էր նաեւ առանց խմիչքի: Բայց սիրահարների հետ ձանձրալի էր: Ամուսնու հետ նա չէր ձանձրանում, իսկ սրանց հետ ձանձրալի էր:

Հետո նրա տղաներից մեկն օդային աղետի ժամանակ մահացավ: Նա ձեռք քաշեց սիրահարներից, բայց խմիչքն այլեւս չէր մեղմացնում ցավը, ու նա հասկացավ, որ անհրաժեշտ էր նոր կյանք սկսել: Եվ հանկարծ ամենայն սրությամբ զգաց իր միայնակությունը, զգաց ու վախեցավ: Հարկավոր էր մի մարդ, որին նա կարողանար հարգել:

Ամեն ինչ շատ սովորական սկսվեց: Նրան դուր էին գալիս Հարրիի գրքերը, ու նա միշտ նախանձում էր, որ Հարրին գիտեր, թե ինչպես պետք է ապրել: Նրան թվում էր, որ Հարրին անում էր հենց այն, ինչ ուզում էր: Նախ նա փորձեց տիրանալ նրան, իսկ հետո խենթի պես սիրահարվեց: Ու վերջում ստացվեց հակադարձ համեմատական պրոգրեսիայի պես մի բան. նա գտա՛վ, թե ինչպես պետք է սկսել նոր կյանքը, իսկ Հարրին կորցրե՛ց իր հին կյանքի մնացուկները:

Հարրին վաճառքի հանեց իր հին կյանքը ապահովության ու հանգստության համար: Դա անառարկելի էր: Իսկ ուրիշ ի՞նչի համար: Ոչ ոք չէր կարող պատասխանել: Այդ կինը նրա համար ամեն ինչ կգներ, միայն թե նա ցանկանար: Նա վստահ էր դրանում: Միաժամանակ այդ անիծյալը գեղեցիկ էր: Հարրին դեմ չէր նրա հետ անկողին մտնելու: Ավելի՛ն, նա բոլոր կանանցից կնախընտրեր նրա՛ն, որովհետեւ նա շա՛տ ավելի հարուստ էր, որովհետեւ շա՛ն ավելի հաճելի էր, շա՛տ ավելի գիտակ էր սիրո հարցերում ու երբեք տեսարան չէր սարքում: Իսկ հիմա, նոր կյանքը, որ նա հազիվ էր սկսել, մոտենում էր իր վախճանին, որովհետեւ երկու շաբաթ առաջ, երբ փուշը ծակեց Հարրիի ծունկը, նա յոդով չայրեց այն: Նրանք շտապում էին լուսանկարել անտիլոպների հոտը: Անտիլոպները կանգնել էին գլուխները բարձր պահած ու ագահորեն հոտոտում էին օդը: Նրանք սրել էին ականջները, որպեսզի ամենափոքր աղմուկի դեպքում փախչեին դեպի թփուտները: Ու այդպես էլ արեցին, առանց հնարավորություն տալու, որ լուսանկարեն իրենց:

Ահա եւ նա:

Հարրին բարձի վրա շրջեց գլուխը, որպեսզի տեսներ նրան:

— Հե՛լո,— ասաց նա:

— Վայրի ոչխար խփեցի,— ասաց կինը:— Հիմա մենք քեզ մսաջուր կտանք եւ կաթի փոշուց կարտոֆիլի պյուրե կպատրաստենք: Ինչպե՞ս ես:

— Համեմատաբար՝ լավ:

— Շատ ուրախ եմ: Ես այդպես էլ գիտեի: Երբ գնացի, դու քնել էիր:

— Լա՛վ քնեցի: Հեռո՞ւ ես գնացել:

— Ոչ: Բլրի հետեւը: Ես հիանալի նշան բռնեցի:

— Դու լա՛վ ես կրակում:

— Ես սիրում եմ որսորդությունը: Ես սիրեցի նաեւ Աֆրիկան: Ճիշտ եմ ասում: Եթե դու առողջանաս, սա կլինի իմ կյանքի լավագույն ճամփորդությունը: Եթե դու իմանայիր, թե ինչքան հաճելի է ինձ համար, երբ մենք երկուսով ենք դուրս գալիս որսի: Ես սիրեցի այս երկիրը:

— Ես էլ սիրեցի:

— Սիրելիս, չես կարող պատկերացնել, թե ինչքան ուրախ եմ, որ դու ավելի լավ ես զգում: Ես պարզապես չեմ դիմանում, երբ դու ինձ հետ խոսում ես այնպիսի տոնով, ինչպես այս առավոտ էիր խոսում: Դու այլեւս այդ ձեւով չես խոսի, չէ՞: Խոստանո՞ւմ ես:

— Չեմ խոսի,— ասաց նա:— Չեմ էլ հիշում, թե ինչ եմ ասել:

— Ինչիդ է պետք ինձ տանջել: Ես միայն տարիքն առած մի կին եմ, որ սիրում է քեզ եւ պատրաստ է անել այն ամենը, ինչ դո՛ւ ես ուզում: Ինձ շա՛տ են տանջել: Դու այլեւս ինձ չես տանջի, չէ՞:

— Ես քեզ հաճույքով կտանջեի անկողնու մեջ,— ասաց նա:

— Ա՛յ, դա ուրիշ է: Մենք բոլորս էլ ստեղծված ենք այդպիսի՛ տանջանքի համար: Ինքնաթիռը վաղը կգա:

— Որտեղի՞ց գիտես:

— Վստահ եմ: Անպայմա՛ն կգա: Տղաներն արդեն փայտ եւ խոտ են հավաքել խարույկի համար: Այսօր ես մի անգամ էլ գնացի ու նայեցի: Իսկական վայրէջքի տեղ է: Մենք ճանապարհի երկու կողմից խարույկ կվառենք:

— Ինչո՞ւ ես կարծում, որ ինքնաթիռը վաղը կգա:

— Վստահ եմ: Արդեն ժամանակն է: Քաղաքում կբուժեն ոտքդ, ու այդ ժամանակ մենք մի լա՛վ կտանջենք իրար: Բայց ոչ այնպես,— ինչպես այս առավոտ:

— Չխմե՞նք: Արեւն արդեն մայր է մտնում:

— Ինձ թվում է, որ չարժե խմել:

— Իսկ ինձ թվում է, որ արժե:

— Այդ դեպքում միասին խմենք: Մոլո, սոդայով վիսկի բեր,— կանչեց նա:

— Երկարաճիտ կոշիկ հագիր,— ասաց Հարրին,— մոծակները կկծեն:

— Ես ուզում եմ նախ լողանալ…

Վրա էր հասնում մութը, ու նրանք խմում էին: Իսկ երբ բոլորովին մթնեց եւ արդեն անհնար էր կրակել, հեռվից մի բորենի անցավ ու թաքնվեց բլրի ետեւում:

— Այդ գարշելին ամեն գիշեր այստեղ է,— ասաց տղամարդը,— երկու շաբաթ, ամեն գիշեր:

— Սա հենց այն նույն բորենին է, որ ոռնում է գիշերները: Թող ոռնա, ես ուշադրություն չեմ դարձնում: Թեպետ շատ զզվելի գազան է:

Նրանք խմում էին երկուսով, ու ցավն արդեն անցել էր: Միայն թե դժվար է միշտ նույն դիրքով պառկել: Ծառաները խարույկ էին վառում, ու բոցերի ստվերները խաղում էին վրանի պատերին: Հարրին զգաց, թե ինչպես հետզհետե հաշտվում էր այս կյանքի հետ, զգաց, թե ինչպես այս կյանքն ակամա հաճելի էր դարձել նրա համար: Կինն անչափ բարի էր նրա հանդեպ: Նա լա՛վ կին էր, հիանալի՛ կին: Ու հենց այդ պահին նա հանկարծ գլխի ընկավ, որ մեռնում է:

Այդ միտքը եկավ մրրիկի պես: Ո՛չ այնպես, ինչպես անձրեւն ու քամին: Այն հանկարծակի՛ ու կատաղորե՛ն: Մրրի՛կ, որից հետո մնում է միայն մի գարշահոտ դատարկություն: Իսկ ամենից տարօրինակն այն է, որ այդ դատարկության եզրով բորենին անձայն վազեց ու անհետացավ:

— Ի՞նչ է պատահել, Հարրի,— հարցրեց կինը:

— Ոչինչ,— ասաց նա:— Փոխիր տեղդ: Այնպես նստիր, որ քամին քո կողմից փչի:

— Մոլոն փոխե՞ց վիրակապերը:

— Հենց նոր բորային լուծույթով լվացում արեցինք:

— Ինչպե՞ս ես զգում:

— Մի փոքր թույլ եմ:

— Գնամ լվացվել,— ասաց կինը,— երկար չի տեւի: Միասին կընթրենք, իսկ հետո մահճակալդ ներս կտեղափոխենք:

— Ուրեմն,— ասաց նա ինքն իրեն,— մենք լավ արեցինք, որ դադարեցինք վիճել:

Նա երբե՛ք չի վիճել այս կնոջ հետ, մինչդեռ ա՛յն կանանց հետ, որոնց սիրե՛լ է մի ժամանակ, վիճել է այնքան հաճախ, որ այդ վեճերն ի վերջո կրծել ու քայքայել էին այն բոլոր թելերը, որ կապում էին նրանց: Նա անչափ շա՛տ է սիրել, անչափ շա՛տ է պահանջել ու վերջում մնացել է ձեռնունայն:

Նա հիշեց այն օրերը, երբ միայնակ ապրում էր Կոնստանտնապոլսում: Ապրում էր այն օրից, երբ վիճեց մեկի հետ ու հեռացավ Փարիզից: Նա անբարոյական կյանք էր վարում, իսկ հետո, երբ խելքի եկավ, երբ միայնության զգացումը ոչ միայն չթուլացավ, այլ ավելի՛ սրվեց, նա գրեց առաջին կնոջը, այն կնոջը, որ լքել էր իրեն, գրեց, թե ինչպես ինքը երբեք չկարողացավ սպանել միայնության զգացումը… թե ինչպես մի անգամ իրեն թվաց, որ նա անցավ Regence-ի[2] մոտով, ու ամեն ինչ շուռ եկավ իր հոգում, թե ինչպես, երբ որեւէ պատահական կին ինչ-որ բանով հիշեցնում էր նրան, նա գնում էր այդ կնոջ ետեւից, վախենալով համոզվել, որ այդ կինը նա չէ, վախենալով կորցնել այն պատրանքը, որ ծնվել էր իր մեջ: Թե ինչպես այն բոլոր կանայք, որոնց հետ պառկել էր նա, ստիպում էին է՛լ ավելի կարոտել նրան: Թե ինչպես այն ամենը, ինչ արել էր այդ կինը, հիմա այլեւս ոչ մի նշանակություն չուներ իր համար, հիմա՛, երբ նա համոզվել էր, որ չէր կարող չսիրել նրան: Նա այդ նամակը գրել էր ակումբում, գրել էր ոչ թե խմած վիճակում, այլ արթուն գիտակցությամբ եւ ուղարկել էր Նյու-Յորք, խնդրելով պատասխանել Փարիզի խմբագրատան հասցեով: Դա ամենաապահով միջոցն էր: Եվ այդ երեկո, երբ կարոտը մի խոր դատարկություն էր ծնել իր հոգում, նա Թաքսիմի մոտ ծանոթացավ հենց առաջին պատահական աղջկա հետ ու նրան տարավ ընթրելու: Հետո նրանք գնացին պարելու: Աղջիկը վատ էր պարում: Նա թողեց այդ աղջկան ու հրավիրեց մի սանձարձակ հայուհու, որ պարելիս փորն այնպես էր օրորում, որ Հարրին հուզմունքից ոտքից գլուխ կարմրեց: Նա աղջկան խլել էր

անգլիացի մի հրետանավորից: Անգլիացին նրան փողոց կանչեց, ու նրանք մթության մեջ սկսեցին կռվել: Նա ամբողջ ուժով երկու անգամ հարվածեց անգլիացու այտոսկրին, բայց երբ անգլիացին չընկավ, նա հասկացավ, որ լուրջ կռիվ էր սպառնում իրեն: Հրետանավորը հարվածեց նրա կրծքին, հետո՝ աչքերին: Նա ձախ ձեռքով նորից խփեց անգլիացուն: Հրետանավորը բռնեց նրա բաճկոնից ու պոկեց թեւքերը: Իսկ նա հետո հրեց ու աջ ձեռքով նորից հարվածեց: Հրետանավորն ընկավ ու ջարդեց գլուխը: Իսկ նա փախավ աղջկա հետ, որովհետեւ զինվորական պարեկը մոտենում էր նրանց:

Նրանք տաքսի նստեցին, անցան Ռիմիզի Հիսայի ու Բոսֆորի մոտով, մի անգամ էլ շրջեցին, իսկ հետո, շնչելով գիշերային թարմ օդը, ետ վերադարձան ու անկողին մտան: Աղջիկը նույնքան հասուն էր, որքան եւ հագուստների մեջ, բայց հարթ էր ու փափուկ, վարդագույն ծաղկաթերթի պես: Կպչուն ու սահուն փորով, մեծ կրծքերով ու ձիգ հետույքով, որ կարիք չուներ բարձերի: Նա գնաց, երբ աղջիկը դեռ քնած էր ու վաղ առավոտյան լույսի տակ բավական մաշված տեսք ուներ:

Նա գնաց Փերա Փալաս: Աչքերն ուռել էին հարվածից, իսկ բաճկոնը բռնել էր ձեռքին, որովհետեւ անգլիացին պոկել էր թեւքերից մեկը: Հենց այդ նույն երեկոյան նա մեկնեց Անատոլիա: Հաջորդ օրը գնացքը պանում էր դաշտերի միջով, որտեղ կակաչներ էին բուսնել: Իսկ այդ կակաչներից օփիում են ստանում: Ու հիմա նա հիշեց, թե օրվա վերջին ինչպիսի տարօրինակ մի զգացում պատեց նրան, եւ թե ինչքան խաբուսիկ էր այս ճանապարհի ու ռազմադաշտի միջեւ ընկած տարածությունը: Ռազմաճակատում գրոհում էին հենց նոր ժամանած հունական սպաները, որոնք կատարյալ ապուշներ էին: Հրետանին կրակում էր հենց յուրայինների վրա, ու անգլիացի ռազմաղիտորդը երեխայի պես լաց էր լինում:

Հենց այդ նույն օրը, առաջին անգամ կյանքում, նա տեսավ սպանված զինվորների, որոնք սպիտակ փեշ էին հագել ու վեր ցցված քթերով պոմպոնավոր կոշիկներ: Թուրքերը համառորեն հարձակվում էին, ու նա տեսնում էր, թե ինչպես էին փախչում փեշեր հագած զինվորները, թե ինչպես սպաները կրակում էին նրանց վրա եւ թե ինչպես հետո հենց իրենք էին փախչում: Նա եւս փախավ անգլիացի ռազմաղիտորդի հետ: Նա այնքան արագ էր վազում, որ կուրծքն սկսեց ցավել, իսկ բերանը կարծես պղնձաղրամով էր լցված: Նրանք թաքնվեցին ժայռերի ետեւում: Իսկ թուրքերն անընդհատ գալիս էին: Հետո նա տեսավ այնպիսի բաներ, որ անզոր էր անգամ պատկերացնել: Իսկ ավելի ուշ տեսավ նաեւ էլ ավելի սոսկալի բաներ: Դրա համար էլ, երբ Փարիզ վերադարձավ, չէր կարողանում ո՛չ խոսել, ո՛չ էլ լսել այդ մասին: Ու երբ մի անգամ անցնում էր Փարիզի սրճարաններից մեկի կողքով, սեղաններից մեկի մոտ տեսավ ամերիկացի մի բանաստեղծի: Նրա առջեւ դրված էր ճաշերի մի ամբողջ կույտ: Նրա դեմքը հիմար էր ու կարտոֆիլի պես փիրուն: Բանաստեղծը ինչ-որ ռումինացու, ինչ-որ Տրիստան Ցարի հետ խոսում էր դադաիստների մասին: Իսկ Տրիստան Ցարը մոնոկլ էր օգտագործում ու անընդհատ բողոքում էր գլխացավից: Իսկ հետո նորի՛ց տուն, նորի՛ց իր կնոջ հետ, որին հիմա նա դարձյալ սիրում էր: Վեճերին վե՛րջ, գժություններին վե՛րջ: Նա ուրախ էր, որ տուն էր վերադարձել: Խմբագրության նամակները տուն էին ուղարկում: Եվ ահա մի օր, երբ դեռ նոր նախաճաշի էին նստել, նա ստացավ պատասխանն այն նամակի, որ գրել էր մի ժամանակ ու ճանաչելով ձեռագիրը, նա ոտքից գլուխ դող զգաց ու փորձեց նամակն այլ ծրարի մեջ խցկել: Բայց կինը հարցրեց. «Սիրելիս, ումի՞ց ես նամակ ստացել»: Ու հենց այստեղ վերջացավ այն, ինչ դեռ նոր էր սկսվել:

Նա հիշեց այն բոլոր հիանալի օրերը, որ անցկացրել էր կանանց հետ, հիշեց նաեւ վեճերը: Նրանք միշտ ամենահաճելի պահերն էին ընտրում վիճելու համար: Եվ ինչո՞ւ էր պետք վիճել

հենց այն ժամանակ, երբ նա այդքան լավ էր զգում: Նա այդ մասի՛ն էլ չգրեց, որովհետեւ չէր ուզում ոչ ոքի վիրավորել, իսկ հետո նրան թվաց, որ առանց այդ էլ ուրիշ շատ բան կար գրելու: Բայց միշտ մտածում էր, որ վերջ ի վերջո կգրի՛ այդ մասին: Ինչքա՛ն բան կար, որ կարելի էր գրել: Նա հետեւել էր, թե ինչպես էր փոխվում աշխարհը, հետեւել էր ոչ միայն դեպքերին, չնայած մեծ քանակությամբ դեպքերի էր ականատես եղել, այլ նաեւ մարդկանց: Նա նկատել էր նույնիսկ ամենաանուրբ փոփոխությունները եւ հիշում էր, թե մարդիկ ինչպես էին իրենց պահում տարբեր հանգամանքներում: Նա ի՛նքն էլ այդ ամենի մասնակիցն է եղել, ամեն ինչ տեսե՛լ է, ճանաչե՛լ, ու նա պարտավո՛ր էր գրել այդ մասին, բայց հիմա արդեն երբեք չի գրի:

— Ինչպե՞ս ես զգում,— հարցրեց կինը: Նա արդեն լվացվել ու դուրս էր գալիս վրանից:

— Լավ:

— Ուզո՞ւմ ես ուտել:— Նա տեսավ, որ Մոլոյի ձեռքին ծալովի մի սեղան կար, իսկ մյուս ծառան պնակներն էր բերել:

— Ուզում եմ գրել,— ասաց նա:

— Դու պետք է խմես մսաջուրը, որպեսզի ուժ հավաքես:

— Ես այս գիշեր մեռնելու եմ,— ասաց նա, կարիք չունեմ ուժ հավաքելու:

— Հարրի, խնդրում եմ, հարկ չկա մելոդրամաների:

— Հոտառությունդ կորցրե՞լ ես, ի՛նչ է: Ոտքիս կեսն արդեն փտել է: Ինչի՞ս է պետք մսաջուրը: Մոլո, սոդայով վիսկի բեր:

— Խնդրում եմ, խմի՛ր մսաջուրը,— մեղմորեն ասաց նա:

— Դե լավ:

Մսաջուրը շատ տաք էր: Նա ստիպված եղավ այն սառեցնել բաժակի մեջ, հետո առանց հազալու, միանգամից խմեց:

— Դու հիանալի կին ես,— ասաց նա— ուշադրություն մի դարձրու ինձ վրա:

Կինը նայեց նրան: Այնքան ծանո՛թ, այնքան սիրելի՛ էր այդ դեմքը, որ Հարրին տեսել էր «Քաղաք ու վիլլաներ» ամսագրի էջերում: Միայն թե այն մի փոքր թառամել էր խմիչքից, մի փոքր թառամել էր սիրո հաճույքներից: Բայց «Քաղաքն ու վիլլաները» երբեք չեն ցույց տվել այսպիսի գեղեցիկ կրծքեր, այսպիսի ամուր ազդրեր եւ այսքան նուրբ, փաղաքշող ձեռքեր: Ու տեսնելով նրա այդքան ծանոթ, այդքան հաճելի ժպիտը, նա կրկին զգաց, որ մեռնելու է: Այս անգամ փոթորիկ չկար: Կար թեթեւ, զով քամի, որից մոմի բոցը մերթ հանգչելու չափ կծկվում է, մերթ բարձրանում եւ ուղղվում:

— Թող քիչ հետո ցանցը բերեն, կախեն ծառից ու կրակ վառեն: Այս գիշեր վրանի տակ չեմ քնի: Կարիք չկա շարժվելու: Պարզ գիշեր է: Անձրեւ չի գա:

Ահա, թե խիչնպե՛ս են մեռնում՝ անլսելի շշուկով: Դե էլ ի՛նչ, այլեւս չեն լինի վեճեր: Նա կարող է խոստանա՛լ, որ չեն լինի: Նա չի փչացնի այն միակ բանը, որ առաջին անգամն է զգում իր մաշկի վրա: Բայց գուցե եւ փչացնի: Դու ամե՛ն ինչ փչացրել ես: Կամ ով գիտե, գուցե այս անգամ չփչացնի:

— Սղագրել գիտե՞ս:

— Չգիտեմ:

— Ոչինչ:

Ճիշտ է, ժամանակը կարճ էր, բայց ամեն ինչ այնպես էր հավաքվել իրար վրա, որ թվում էր, թե կարելի էր մի հատվածում տեղավորել բոլորը: Միայն թե կարողանար:

Լճի դիմաց, բլրի վրա, գերանակերտ, սպիտակ մի տուն կար: Դռան մոտ դրված էր զանգ, որի օգնությամբ ճաշի էին կանչում բնակիչներին: Տան ետեւում դաշտ էր, իսկ դաշտի ետեւում սկսվում էր անտառը: Տնից մինչեւ նավահանգիստ ձգվում էր բարդիների շարքը: Հրվանդանի մոտ եւս բարդիներ էին աճում: Անտառի եզրից դեպի լեռն էր բարձրանում մի արահետ, որտեղ նա մոշ էր հավաքում: Հետո գերանակերտ տունն այրվեց, այրվեցին նաեւ այն բոլոր գենքերը, որ կախված էին բուխարու վրա ամրացված եղջերուի ոտքերից: Հրացանի փողերն ու պահեստատուփի մեջ հալվող կապարե գնդակներն ընկած էին մոխիրների վրա, որ օգտագործում էին օճառ պատրաստող հսկա կաթսաների համար, ու դու հարցրիր պապիկիդ, թե կարելի՞ է վերցնել հրացանի փողերն ու խաղալ, ու նա ասաց՝ ոչ: Միր դրանք դեռ ի՛ր հրացաններն էին, իսկ նորերը նա երբեք չգնեց: Ոչ էլ շարունակեց որսորդությամբ զբաղվել: Այդ նույն տեղում բարակ տախտակներից վերակառուցեցին տունը եւ ստիպակ ներկեցին: Պատշգամբից երեւում էին բարդիները, իսկ բարդիներից այն կողմ՝ լիճը: Բայց հրացան այլեւս չկար: Հրացանի փողերը, որ մի ժամանակ կախված էին եղջերուի ոտքերից, գերանակերտ տանը, հիմա ընկած էին մոխիրների մեջ ու ոչ ոք ձեռք չէր տալիս նրանց:

Պատերազմից հետո, Սեւ Անտառում մենք վարձեցինք կարմրախայտով հարուստ մի գետակ, որին կարելի էր հասնել երկու տարբեր ճանապարհներով: Առաջին ճանապարհը, որի երկու կողմում ստվերախիտ ծառեր էին շարված, սկսվում էր Տրիբերգից ու գնում էր դեպի հովիտը: Հետո բարձրանում էր բլուրը, անցնում փոքր ֆերմաների ու Շվարցվալդի բարձր շենքերի կողքով ու շարունակվում էր մինչեւ գետը: Այ, հենց այստեղ էլ մենք ձուկ էինք որսում:

Երկրորդ ճանապարհը տանում էր դեպի անտառի եզրը, որից հետո հարկավոր էր սոճուտով բարձրանալ բլուրը, հասնել մարգագետնին ու իջնել մինչեւ կամուրջը: Գետի մոտ կեչիներ էին աճում: Գետը փոքր էր ու նեղ, բայց թափանցիկ ու արագահոս, իսկ այնտեղ, որտեղ նա քշում-տանում էր կեչիների արմատները, հորձանուտ էր գոյանում: Տրիբերգի պանդոկում սեզոնը հաջող էր սկսվել: Անչափ հաճելի էր այնտեղ: Շուտով պանդոկի տիրոջ հետ լավ բարեկամներ դարձանք: Հաջորդ տարին սկսվեց ինֆլյացիան, եւ այն դրամը, որ նա հավաքել էր մի տարի առաջ, այլեւս բավական չէր մթերքներ գնելու ու կրկին բաց անելու պանդոկը, եւ նա կախեց իրեն:

Դու կարող էիր թելադրել դա, բայց եւ չէի՛ր կարող թելադրել Քոնթրեսքարդի հրապարակի մասին, որտեղ ծաղկավաճառուհիները ներկում էին ծաղիկները, ու ներկը հոսում էր մայթի վրայով, հասնում մինչեւ ավտոբուսի կանգառը: Չէիք կարող թելադրել նաեւ այն ծերունիների ու պառավների մասին, որոնք միշտ հարբած էին: Ո՛չ էլ այն երեխաների մասին, որոնց քիթն անընդհատ վազում էր ցուրտ եղանակին: Ո՛չ էլ կեղտոտ քրտնահոտի, աղքատության, Café des Amateurs-ի հարբածների ու Bal musette-ի վերին հարկերում ապրող պոռնիկների մասին: Ո՛չ էլ այն դռնապանուհու մասին, որն իր խցիկում ընդունում էր հանրապետական գվարդիայի հեծյալ զինվորներին, որի փտրփափնջով սաղավարտը դրված էր պատոռին: Ո՛չ էլ միջանցքի այն կողմում ապրող կնոջ մասին, որի ամուսինը հեծանվորդ էր, ո՛չ էլ այն մասին, թե ինչպես մի առավոտ կաթնավաճառի խանութում նա ուրախացավ, երբ բաց արեց L'Auto-ն ու կարդաց, որ ամուսինը Փարիզ—Տուր մրցավազքում շահել էր երրորդ տեղը: Նա առաջին անգամն էր

մասնակցել այդպիսի խոշոր մրցման: Կինը ծիծաղեց, կարմրեց, լաց եղավ, հետո սպորտային դեղին թերթը ձեռքին տուն վազեց: Իսկ Bal musette-ի տիրուհու ամուսինը տաքսու շոֆեր էր, ու երբ Հարրին առավոտ շուտ պետք է օդանավակայան գնար, նա բախեց դուռը եւ արթնացրեց նրան: Ու մեկնելուց առաջ նրանք երկուսով մի-մի բաժակ սպիտակ գինի խմեցին բարում: Նա ճանաչում էր իր թաղի հարեւաններին, որովհետեւ բոլորն էլ աղքատ էին:

Հրապարակի շուրջ ապրող մարդիկ բաժանվում էին երկու տեսակի. հարբեցողների ու մարմնամարզիկների: Հարբեցողները խմիչքո՛վ էին սպանում իրենց աղքատությունը: Իսկ մարմնամարզիկներն իրենց մարզումներո՛վ էին արտահայտում այն ամենը, ինչ կուտակվել էր նրանց հոգում: Նրանք կոմունարների հետնորդներն էին, որոնց համար այնքան էլ դժվար չէր ճիշտ կողմնորոշվել քաղաքականության մեջ: Նրանք գիտեին, թե ովքեր են սպանել իրենց հայրերին, իրենց ազգականներին, իրենց եղբայրներին իրենց ընկերներին, երբ Վերբալյան զինվորները կոմունայի անկումից հետո գրավեցին քաղաքը ու հաշվեհարդար տեսան այն բոլոր մարդկանց հետ, որոնց ձեռքերին կոշտուկներ կային, գլխներին՝ կեպկաներ կամ որեւէ այլ նշան, որ մատնում էր նրանց բանվորական ծագումը: Եվ այդ աղքատության մեջ, այդ թաղի գինետանը, նա գրեց իր առաջին տողերը ու դրանով սկիզբ դրեց այն գործին, որին հետեւելու էր իր ամբողջ կյանքում:

Փարիզում չկար մի այլ թաղամաս ,որ նրա համար այսքան սիրելի լիներ. սաղարթախիտ ծառեր, հին, սպիտակ տներ, որոնց ներքեւի մասը սրճագույն էր ներկված, հրապարակում գտնվող ավտոբուսների կանաչ շարքը, մայթի վրա թափվող արհեստական ծաղիկների ներկը, Կարդինալ Լեմուան փողոցից դեպի գետն իջնող անսպասելի զառիթափը, Մուֆթար փողոցի նեղ ու խճողված աշխարհը: Երկու փողոց, որոնցից մեկը բարձրանում էր դեպի պանթեոն, իսկ մյուսը, որով նա ամեն օր անցնում էր իր հեծանիվով, ամբողջ շրջանի միակ ասֆալտապատ եւ հարթ ճանապարհն էր, նեղ ու բարձր տներով եւ էժանագին մի հյուրանոցով, որտեղ մահացել էր Պոլ Վեռլենը: Նրանց բնակարանը բաղկացած էր երկու սենյակներից, ու նա հյուրանոցի վերին հարկում եւս մի համար էր վարձել, որն արժեր վաթսուն ֆրանկ: Հենց այդտե՛ղ էլ նա գրում էր, հենց այդտեղի՛ց էլ երեւում էին Փարիզի տանիքները, ծխնելույզներն ու քաղաքի բոլոր բլուրները:

Բնակարանի պատուհաններից երեւում էր միայն ածխավաճառի կրպակը: Ածխավաճառը գինի էլ էր ծախում. վատ գինի: Boucherie chevalide-ի մուտքի վրա դրված ձիու ոսկե գլուխը, նրա բաց պատուհանից երեւացող ոսկեգույն, դեղին ու կարմիր մսագնդերը եւ կանաչ ներկված գինետունը, որտեղից նրանք գինի էին վերցնում. լա՛վ կամ էժանագի՛ն: Իսկ մի փոքր այն կողմ՝ սպիտակ սվաղած պատեր էին ու հարեւանների պատուհանները: Ա՛յն հարեւանների, որոնք երեկոները, երբ ինչ-որ հարբած մարդ թավալվում էր փողոցում, տնքում ու հառաչում (ֆրանսիական iviesse-ի[3] տիպիկ օրինակ, չնայած աշխատում են քեզ հավատացնել, որ այդպիսի բան գոյություն չունի), բաց էին անում պատուհանները, ու ականջիդ էին հասնում նրանց ձայները:

— Ո՞ւր է ոստիկանը: Երբ որ պետք չի, սրիկան ամբողջ օրը ցցվում է քթներիս առաջ: Երեւի հիմա պառկել է ինչ-որ դռնապանուհու հետ: Ոստիկանի՛ն փնտրեցեք: — Վերջապես ինչ-որ մեկը մի դույլ ջուր է թափում, ու տնքոցները դադարում են:— Ի՞նչ է սա: Ջուր: Ճի՛շտ է:

Ու պատուհանները փակվում են:

Մարին, նրա սպասուհին, դժգոհ է ուրթամյա աշխատանքային օրից:

— Եթե ամուսինն աշխատում է մինչեւ ժամը վեցը, ապա տուն գնալու ճանապարհին գոնե քիչ է խմում, գոնե քիչ է ծախսում: Իսկ եթե մինչեւ ժամը հինգն է աշխատում, ուրեմն, ամեն երեկո հարբում է ու ծախսում իր բոլոր փողերը: Միայն բանվորի կինն է, որ տուժում է աշխատանքային օրվա կրճատումից:

— Էլի մսաջուր տա՞մ,— հարցրեց կինը:

— Ոչ, շատ շնորհակալ եմ: Հիանալի մսաջուր էր:

— Մի քիչ էլ խմիր:

— Ավելի լավ է սոդայով վիսկի տուր:

— Դա քեզ վնաս է:

— Այո: Վնաս է ինձ: Խոսք եւ երաժշտություն՝ Քոուլ Փորթերի: Ու քո դեմքը դժգույն է կրքոտ ցանկությունից:

— Ինքդ էլ գիտես, ես սիրում եմ, երբ դու խմում ես:

— Այո, իհարկե: Միայն թե դա վնաս է ինձ:

Երբ նա գնա, մտածեց Հարրին, կխմեմ այնքան, որքան ցանկանամ: Ավելի շուտ այնքան, որքան մնացել է շշի մեջ: Ո՛չ թե հոգնել էր նա: Չափազանց շա՛տ էր հոգնել: Հարկավոր էր մի փոքր նիրհել: Նա լուռ պառկել էր, ու մահն այլեւս նրա կողքին չէր: Երեւի գնացել էր ուրիշ փողոցով: Երեւի հիմա գնում է իր զույգի հետ ,գնում է հեծանվով եւ անձայն անցնում է մայթերի կողքով:

Այո, նա երբեք չի գրել Փարիզի մասին: Համենայն դեպս, ա՛յն Փարիզի, որն այնքան թանկ էր իր համար: Իսկ մնացածնե՞րը, որոնք այդպես էլ մնացին չգրված:

Իսկ ռանչո՞ն, եղեսպակի արծաթե սպիտակությո՞ւնը, ոռոգիչ ջրանցքների արագահոս ու թափանցիկ ջո՞ւրը, կանաչ առվույտի ծանր հասկե՞րը: Արահետը տանում էր դեպի բլուրները, ու կովերն ամռանը եղնիկի պես վախկոտ էին դառնում: Իսկ աշնանը, երբ սարերից կովերին տուն էին քշում, նրանք բառաչում էին, քայլում էին դանդաղ եւ համաչափ ու փոշի էին բարձրացնում: Երեկոյան պարզ երեւում էր լեռան սրածայր գագաթը, իսկ դու արահետով ցած էիր իջնում՝ դեպի լուսնի լույսով ողողված հովիտը: Հիմա նա հիշեց, թե ինչպես էր վերադառնում անտառի միջով, թե ինչպես էր մթության մեջ բռնում ձիու պոչից: Հիշեց նաեւ այն բոլոր պատմվածքները, որ նա պատրաստվում էր գրել այդ վայրերի մասին: Պատմվածք այն հիմար պատանու մասին, որին թողել էին ռանչոյում ու կարգադրել, որ ոչ ոքի անասնակեր չտա: Իսկ ֆրոքսեցի մի ապուշ ծերունի, որի մոտ մի ժամանակ աշխատել էր հիմար պատանին եւ անընդհատ ծեծ կերել նրանից, ռանչո մտավ ու անասնակեր պահանջեց: Տղան չտվեց, իսկ ծերունին սպառնեց, որ դարձյան կծեծի նրան: Տղան խոհանոցից վերցրեց հրացանը եւ սպանեց ծերունուն: Ու երբ մի շաբաթ հետո նրանք վերադարձան, սառած դիակն ընկած էր փարախում, ու շները զզվել էին նրան: Իսկ այն, ինչ մնացել էր դիակից, դու փայթայթեցիր սավանի մեջ, դրեցիր սահնակի վրա եւ տղային ստիպեցիր, որ օգնի քեզ, ու դուք երկուսդ էլ, դահուկներ հագած, քարշ տվեցիք սահնակը: Այդպես դուք վայթսուն մղոն անցաք, մինչեւ որ հասաք քաղաք, որտեղ հարկավոր էր տղային իշխանության ձեռքը հանձնել: Իսկ նրա մտքովն անգամ չէր անցնում, որ իրեն կձերբակալեն: Մտածում էր, որ կատարե՛լ է իր պարտքը, որ դու նրա ընկե՛րն ես, որ իր արարքի համար վարձատրություն կստանա: Նա օգնե՛ց, որ ծերունուն այստեղ բերեն, թող

բոլորն էլ իմանան, թե ինչքա՜ն վատ ծերունի էր նա, թե նա ինչպես էր ուզում գողանալ ուրիշի խոտը: Ու երբ շերիֆը շղթայեց տղայի ձեռքերը, նա չէր հավատում իր աչքերին: Հետո լաց եղավ: Ահա այս պատմությունն էր, որ նա միշտ պահում էր ապագայի համար: Ամենաքիչը նա քսան պատմվածքի նյութ էր հավաքել այս վայրերից: Բայց եւ այնպես ոչ մեկն էլ չգրեց: Ինչո՞ւ:

— Դե գնա ու բացատրիր, թե ինչո՞ւ:

— Ինչի՞ մասին ես խոսում, սիրելիս:

— Ոչինչ:

Կինն այն օրվանից, ինչ կապվել էր Հարրիի հետ, արդեն քիչ էր խմում: Բայց եթե Հարրին նույնիսկ ապրի, երբեք չի գրի նրա մասին: Նա հիմա վստա՞հ էր դրանում: Ո՛չ էլ ուրիշների մասին: Հարուստները ձանձրալի մարդիկ են եւ անչափ շատ են խմում կամ անչափ շատ են տարվում թղթախաղով: Նրանք ձանձրալի են ու միանման: Նա հիշեց խեղճ Ջուլիանին[4] ու նրա խորին հարգանքը սրանց հանդեպ: Մի անգամ նա մի պատմվածք էր գրել, որ սկսվում էր այսպես. «Հարուստները նման չեն ո՛չ ինձ, ո՛չ ձեզ»: Իսկ ինչ-որ մեկն ասաց Ջուլիանին. «Այո, նրանք ավելի շատ փող ունեն, քան մենք»: Բայց Ջուլիանը չհասկացավ, որ ձեռք են առնում իրեն: Նա կարծում էր, որ հարուստները մարդկային հատուկ եւ խորհրդավոր մի ցեղ են, ու երբ համոզվեց, որ նրանք բոլորովին էլ այդպիսին չեն, դա նրան ավելի ընկճեց, քան որեւէ այլ բան:

Նա արհամարհում էր բոլոր նրանց, ովքեր ընկճվում էին կյանքի հարվածների տակ: Այդպես էլ պիտի լինե՛ր, նա չպե՛տք է նրանց համակրեր, քանի որ ինքն ամեն ինչ հասկանում էր: Նա մտածում էր, որ ամեն դժվարություն կհաղթահարի, որ աշխարհում ոչինչ չի կարող կոտրել նրան, եթե միայն ինքն ուշադրություն չդարձնի ոչ մի բանի վրա:

Շա՛տ լավ: Նա հիմա ուշադրություն չի դարձնում նաեւ մահվա՛ն վրա: Ցավը միակ բանն էր, որից նա միշտ վախեցել է: Նա կարող էր իսկական տղամարդու պես դիմանալ, միայն թե այդ ցավը շատ չտեւեր, միայն թե ուժասպառ չաներ նրան: Բայց այս անգամ տանջանքն անտանելի էր, ու երբ նա զգաց, որ սկսում է հանձնվել, ցավը դադարեց:

Նա հիշեց մի վաղեմի դեպք. գերմանական պահակակետից մի նռնակ գցեցին հրետանու սպա Ուիլյամսոնի վրա, երբ նա գիշերն անցնում էր փշալարերի միջով: Նա լաց էր լինում եւ խնդրում էր բոլորին, որ սպանեն իրեն: Նա լավ սպա էր, գեր ու անչափ քաջ, բայց եւ մի փոքր ցուցամոլ: Սակայն այդ գիշեր նրանք լուսարձակների լույսի տակ տեսան, թե ինչպես նրա փորոտիքը դուրս թափվեց եւ կախվեց լարերի վրա: Այնպես որ, երբ նրան փորձեցին կենդանի դուրս բերել այնտեղից, ստիպված եղան դանակով կտրել նրա փորոտիքը: Կրակի՛ր, Հարրի: Ի սեր աստծո, կրակի՛ր: Մի անգամ վեճ ծագեց այն հարցի շուրջը, որ աստված մարդուն իր վերուստ առաքում է միայն այն, ինչ նա ի վիճակի է տանել, եւ մի մարդ պաշտպանեց այն տեսակետը, որ իբր ցավը ինչ-որ պահ ինքնուստինքյան սպանում է մարդուն: Բայց նա միշտ հիշում էր այդ գիշերը, միշտ հիշում էր Ուիլյամսոնին: Ցավը չսպանեց Ուիլյամսոնին: Ու երբ Հարրին նրան տվեց իր համար պահած մորֆինի ամբողջ պաշարը, միեւնո՛ւյն է, դա՛ եւս միանգամից չօգնեց:

Բայց այն, ինչ հիմա զգում էր նա, անչափ թեթեւ էր: Ու եթե իր դրությունն ավելի չվատանար, ապա նա դժգոհելու ոչ մի պատճառ չէր ունենա: Չնայած, նա, իհարկե, կնախընտրեր ավելի՛ հաճելի շրջապատում լինել:

Նա մի փոքր մտածեց այն մարդկանց մասին, որոնց հիմա կուզենար իր կողքին տեսնել: Ո՛չ, մտածեց նա, երբ դու ամեն ինչ շա՛տ երկար ես անում կամ անում ես շա՛տ ուշ, ապա էլ մի՛ սպասիր, որ ինչ-որ մեկը կողքիդ կանգնած լինի: Մարդիկ չկան, հեռացել են: Հյուրընկալությունը վերջացել է, ու հիմա դու մենակ ես մնացել քո տանտիրուհու հետ: Մահն ինձ ճանձրացրել է նույնքան, որքեն մնացած ամեն ինչը, մտածում էր նա:

— Ձանձրալի է,— բարձրաձայն ասաց նա:

— Ի՞նչն է ձանձրալի, սիրելիս:

— Ամեն ինչ, որ չափազանց երկար ես անում: Նայեց կնոջը, որ կանգնել էր իր ու կրակի միջեւ: Նա հենվել էր աթոռի մեջքին, իսկ կրակի բոցը լուսավորել էր հաճելի կնճիռներով ծածկված նրա դեմքը: Հարրին նկատեց, որ նա նիրհում է: Հետո շատ մոտիկից լսեց բորենու ձայնը:

— Ես գրում էի,— ասաց նա,— բայց հոգնեցի:

— Ի՞նչ ես կարծում, կկարողանա՞ս քնել:

— Իհարկե՛, կկարողանա՛մ: Իսկ դու ինչո՞ւ չես պառկում:

— Ուզում եմ քեզ մոտ նստել:

— Տարօրինակ մի բան չե՞ս զգում,— հարցրեց նա:

— Ոչ: Մի փոքր քնել եմ ուզում:

— Իսկ ես զգո՛ւմ եմ:

Նա հենց հիմա զգաց, որ մահը դարձյալ մոտենում էր իրեն:

— Դու ինքդ էլ գիտես, հետաքրքրությունն այն միակ բանն է, որ ես երբեք չեմ կորցրել,— ասաց նա կնոջը:

— Դու ոչինչ էլ չես կորցրել: Դու ամենակատարյալն ես այն բոլոր մարդկանցից, որոնց ես երբեւէ ճանաչել եմ:

— Աստված իմ,— ասաց Հարրին,— ինչքան քիչ բան գիտի կինը: Ի՞նչ բան է դա: Նախազգացո՞ւմ:

Որովհետեւ հենց այդ պահին մահը բոլորովին մոտեցավ նրան եւ գլուխը դրեց մահճակալի եզրին, ու Հարրին զգաց նրա շունչը:

— Երբեք չէի հավատա, որ նա այնպիսին է, ինչպես պատկերացնում են՝ գանգ ու գերանդի,— ասաց Հարրին:— Նույն հաջողությամբ նա կարող է հեծանիվ նստած ոստիկան լինել կամ թռչուն: Կամ կարող է բորենու պես լայն դունչ ունենալ:

Հիմա նա հետզհետե առաջանում էր, բայց այլեւս առաջվա նման որոշակի ձեւ չուներ: Պարզապես տարածություն էր գրավում:

— Ասա, որ հեռանա՛:

Նա ոչ միայն չհեռացավ, այլ մի փոքր մոտեցավ:

— Դժոխային հոտ է փչում քեզանից,— ասաց նա մահվանը,— ապօրինի՛ ծնունդ:

Նա ավելի էր մոտենում, ու հիմա Հարրին այլեւս չէր կարող նրա հետ խոսել, ու երբ մահը տեսավ, որ նա արդեն անկարող է խոսել, է՛լ ավելի մոտեցավ, ու Հարրին հիմա փորձեց նրան անխոս հեռացնել, բայց նա դեռ առաջանում էր ու ամբողջ ծանրությամբ նստում նրա կրծքին, թույլ չտալով խոսելու կամ շարժվելու, ու հենց այդ պահին Հարրին լսեց կնոջ ձայնը.

— Բվանան քնել է: Զգուշությամբ վերցրեք մահճակալը եւ տարեք վրան:

Հարրին չէր կարող կնոջն ասել, որ նրան քշի այստեղից, իսկ մահն ավելի ծանրորեն էր նստում նրա կրծքին ու թույլ չէր տալիս շնչելու: Հետո, երբ ծառաները բարձրացնում էին մահճակալը, հանկարծ նա թեթեւություն զգաց, ու ծանրություն իջավ նրա կրծքից:

Առավոտյան նա լսեց ինքնաթիռի աղմուկը: Ինքնաթիռը երկնքում մի փոքրիկ կետ էր թվում: Հետո նա մի լայն պտույտ գործեց, ու ծառաներն ընդառաջ վազեցին, նավթ թափեցին խոտերի վրա ու վառեցին: Հարթության շուրջը երկու հսկա խարույկներ էին վառվում, իսկ վաղորդյան զեփյուռը ծուխը քշում էր դեպի ճամբար: Ինքնաթիռն ավելի մոտեցավ գետնին, երկու պտույտ եւս գործեց, հետո վայրէջք կատարեց ու առանց ցնցվելու, նստեց գետնին: Նրա հին ծանոթներից մեկը, Քոմթոնը, գալիս էր դեպի վրանը: Նա հագել էր պարկանման տաբատ, բրդյա կտորից կարված բաճկոն ու թաղիքե գլխարկ:

— Ի՞նչ է պատահել, բարեկամ,— հարցրեց Քոմթոնը:

— Ոտքս է ցավում,— պատասխանեց Հարրին:— Չե՞ք ուզում նախաճաշել:

— Շնորհակալություն: Միայն թեյ կխմեմ: Թիթեռնիկով եմ եկել: Մեմսայիբին չենք կարողանա մեզ հետ վերցնել: Միայն մի հոգու տեղ կա: Իսկ ձեր բեռնատարն արդեն ճանապարհ է ընկել:

Էլլենը Քոմթոնին մի կողմ տարավ ու խոսեց նրա հետ: Քոմթոնն ավելի աշխույժ վերադարձավ:

— Դե հիմա մենք ձեզ կտեղավորենք,— ասաց նա,— հետո ետ կգամ ու մեմսայիբին կվերցնեմ: Միայն վախենում եմ, որ Արուշայում բենզինի համար ստիպված լինենք վայրէջք կատարել: Դե, շտապենք:

— Իսկ թե՞յը:

— Ճիշտն ասած, այնքան էլ չէի ուզում թեյ խմել:

Ծառաները բարձրարցին մահճակալը, շրջանցեցին վրանը, անցան ժայռերի ու խարույկների կողքով, որոնց վրա դիզված խոտն արդեն վերջացել էր, ու դրա համար էլ այլեւս ծուխ չէին հանում ու պայծառորեն բոցկլտում էին քամու դիմաց, եւ մոտեցան ինքնաթիռին: Դժվար էր Հարրիին խցիկի մեջ տեղավորել, բայց երբ վերջապես տեղավորեցին, նա հենվեց կաշվե աթոռակին, իսկ ծառաները նրա ոտքը հենեցին Քոմթոնի աթոռի ուսին: Քոմթոնը գործի դրեց շարժիչը ու մտավ իր խցիկը: Նա ձեռքով հրաժեշտ տվեց Էլլենին ու ծառաներին, ու երբ շարժիչի ձայնը շուտով սովորական աղմուկի վերածվեց, ինքնաթիռը պտույտ գործեց, անցավ վարազի փոսերի մոտով, սկսեց ցատկոտել տեղում, հետո ետեւում թողեց նաեւ խարույկների միջեւ գտնվող

հարթությունը եւ մի վերջին անգամ ցնցվելով, օդ բարձրացավ: Նա տեսավ, թե ինչպես ներքեւից հրաժեշտ էին տալիս իրենց: Բլրի մոտ ամրացված վրանը հիմա գրեթե հավասարվել էր գետնին, հարթությունը հետզհետե ավելի էր լայնանում, ծառերն ու թփուտները եւս գրեթե գետնին էին հավասարվել: Գազանների հետքերը բարակ թելերի նման ձգվում էին դեպի չորացած աղբյուրները, իսկ քիչ այն կողմ մի աղբյուր կար, որ առաջ նա երբեք չէր տեսել: Վերեւից երեւում էին միայն զեբրերի կլորիկ գավակներն ու մի քանի անտիլոպ, որոնք այս ու այն կողմ թափված բծեր էին հիշեցնում, եւ հիմա կարծես երկար շղթաներով բարձրանում էին բլուրը: Երբ ինքնաթիռի ստվերը գազանների վրա ընկավ, նրանք ցրվեցին ու փախան, ու հիմա առանձին-առանձին նրանք անչափ փոքր էին թվում, եւ նույնիսկ զգալի չէր, որ սրընթաց վազում էին: Մինչեւ հորիզոնը ձգված հարթությունը դեղնամոխրագույն էր: Իսկ ուղիղ նրա աչքերի առաջ երեւում էր միայն Քոմթոնի բրդե կտորից կարված բաճկոնի ուսն ու թաղիքե գլխարկը: Հետո նրանք անցան նախալեռների վրայով, որտեղ անտիլոպները նեղ արահետներով մագլցում էին լեռը: Այնուհետեւ կանաչ անտառների միջից անսպասելի երեւացին լեռները, որոնց լանջերը ծածկված էին հնդգեղեգնի խիտ թփուտներով: Իսկ հետո դարձյալ թավ անտառներ, որոնք լեռնագագաթների ու ձորերի հետ կարծես մի միասնական քանդակ էին ներկայացնում: Վերջապես, ահա եւ լեռնանցքը, որտեղից լեռներն աստիճանաբար սկսում են իջնել, իսկ հետո նորից բաց մանուշակագույն ու մուգ դարչնագույն հարթություն, որ պարուրված է շիկացած օդով: Ինքնաթիռը հիմա անցնում է այդ շիկացած օդի միջով, ու Քոմթին շրջվում է եւ նայում, թե նա ինչպես է զգում իրեն: Իսկ առջեւում դարձյալ մթին էին տալիս լեռները:

Եվ այդ պահին, փոխանակ դեպի Արուշա ուղղություն վերցնելու, ինքնաթիռը ձախ է դառնում: Քոմթին երեւի կարծում էր, որ բենզինը կբավականացնի: Ու նայելով ներքեւ, նա տեսավ գետնի վրա լողացող մի ամպ, որ քուլաների բաժանված այս ու այն կողմ էր թռչում: Նա նման էր փոթորկի ժամանակ թափվող առաջին ձյանը: Ա՛յն փոթորկի, որ հայտնի չէ, թե որտեղից է փչում: Ու նա գլխի ընկավ, որ այդ մորեխը հարավից էր գալիս: Ինքնաթիռն սկսեց ավելի վեր բարձրանալ ու կարծես դեպի արեւելք թեքվեց: Իսկ հետո ամեն ինչ հանկարծ մթնեց: Ընկել էին տեղատարափ անձրեւի ու մրրկաբեր ամպերի մեջ, կարծես ջրվեժի միջով էին թռչում: Իսկ երբ դուրս եկան այդ ամպերից, Քոմթին շրջեց երեսը, ժպտաց ու երկարեց ձեռքը: Իսկ այնտեղ, առջեւում, նա տեսավ Կիլիմանջարոյի հսկա, երկնասլաց ու արեւի տակ տնհավատալիորեն ճերմակ, կլոր գագաթը, որի առջեւ աշխարհում ամեն ինչ թվում է խեղճ ու չնչին: Ու նա զգաց, որ հենց այդտե՛ղ էլ գնում էր ինքը:

Նույն այդ պահին բորենին դադարեց մթության մեջ ոռնալ, ու հիմա սկսեց ինչ-որ տարօրինակ, գրեթե մարդկային լացի նման ձայներ հանել: Կինը լսեց դա ու անհանգիստ շարժվեց մահճակալում: Նա չարթնացավ: Նա երազում տեսավ Լոնգ Այլենդի տունը, ու դա կարծես իր աղջկա դեբյուտի նախօրյակին էր: Չգիտես ինչու, այստեղ էր նաեւ հայրը ու նա անչափ կոպիտ էր վերաբերվում նրա հետ: Հետո բորենին այնքան ուժեղ ոռնաց, որ նա արթնացավ ու առաջին րոպեին չկարողացավ հասկանալ, թե որտեղ է ինքը, եւ սարսափը պատեց նրան: Նա վերցրեց ձեռքի լապտերը ու լուսավորեց երկրորդ մահճակալը, որ Հարրիի քուն մտնելուց հետո ներս էին բերել: Կինը տեսավ, որ նա պառկել էր մոծակներից պաշտպանող ցանցի ետեւում, իսկ ոտքը, չգիտես ինչու, դուրս էր հանել ու կախել մահճակալից: Վիրակապն ընկել էր, ու կինը վախենում էր այն կողմ նայել:

— Մոլո՛,— կանչեց նա,— մոլո՛, մոլո՛:— Հետո գոռաց.— Հարրի՛, Հարրի՛:— Հետո ավելի՛ ուժգին գոռաց.— Հարրի՛, ի սեր աստծո, Հարրի՛:

Պատասխան չեկավ, ու կինն այլեւս չէր լսում նրա շնչառությունը:

Վրանի ետեւում բորենին դարձյալ նույն տարօրինակ ձայներն արձակեց: Բայց նրա սիրտն այնքան արագ էր բաբախում, որ նա այլեւս ոչինչ չլսեց:

1936

1. ↑ Առանց նայելու: (ֆր:)
2. ↑ Մունիցիպալիտետ:
3. ↑ Հարբեցողություն (ֆր.):
4. ↑ Խոսքը վերաբերում է ամերիկյան գրող Սքոթ Ֆիցջերալդին (1896—1940)